Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/40733/02/23

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ Դատարան)

նախագահությամբ դատավոր՝ ՎԱՀԱԳՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ

2024 թվականի ապրիլի 05-ին

Քննարկելով <<Կապավոր>> ՍՊԸ-ի ընդդեմ <<Երևանի պետական համալսարան>> հիմնադրամի և <<ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-23/1>> ծածկագրով գնանշման հարցման միջոցով Դիլիջանի հանգստյան գոտու կառուցման աշխատանքների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Գնահատող հանձնաժողով)՝ Գնահատող հաձնաժողովի 08.11.2023 թվականի որոշումն /նիստի արձանագրության 11.1 կետ/ անվավեր պահանջի մասին քաղաքացիական գործը վարույթ ընդունելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<<Կապավոր>> ՍՊԸ-ի անունից հայցադիմում է ներկայացվել Դատարան ընդդեմ <<Երևանի պետական համալսարան>> հիմնադրամի և գնահատող հանձնաժողովի՝ 08.11.2023 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դատարանի 06.12.2023 թվականի որոշմամբ (դատավոր՝ Մ.Ստեփանյան) հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 05.01.2024 թվականին կայացված որոշմամբ Դատարանի (դատավոր՝ Մ.Ստեփանյան) 06.12.2023 թվականի որոշումը վերացվել է:

05.03.2024 թվականին քաղաքացիական գործը մակագրվել է Դատարանի դատավոր Վ.Թորոսյանին, իսկ նույն դատավորի աշխատակազմին հանձնվել է 12.03.2024 թվականին: Դատարանի 20.03.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է սահմանելով եռօրյա ժամկետ՝ հայցադիմումի թերությունները շտկելու և այն կրկին ներկայացնելու համար:

Հայցադիմումը ներկայացվել է կրկին, որը 01.04.2024թ.-ին մակագրվել է Դատարանի դատավոր Վ.Թորոսյանին, իսկ նույն դատավորի աշխատակազմին հանձնվել է 02.04.2024 թվականին:

Դատարանը, ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը գտնում է, որ 01.04.2024թ.-ին ներկայացված հայցադիմումում վերացված է Դատարանի 20.03.2024թ.-ի որոշմամբ մատնանշված թերությունը:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների

պահպանմամբ և առկա չեն նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 5-րդ մասով, 126-րդ հոդվածի 5-րդ մասով, 166-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. <<Կապավոր>> ՍՊԸ-ի ընդդեմ <<Երևանի պետական համալսարան>> հիմնադրամի և <<ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-23/1>> ծածկագրով գնանշման հարցման միջոցով Դիլիջանի հանգստյան գոտու կառուցման աշխատանքների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Գնահատող հանձնաժողով)՝ Գնահատող հանձնաժողովի 08.11.2023 թվականի որոշումն /նիստի արձանագրության 11.1 կետ/ անվավեր պահանջի մասին ընդունել վարույթ:

2. Սույն գործով եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակել 03.05.2024 թվականին՝ դատական իշխանության պաշտոնական կայքում էլեկտրոնային եղանակով հրապարակելու միջոցով :

3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածով սահմանված կարգով պատասխանող <<Երևանի պետական համալսարան>> հիմնադրամից և <<ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-23/1>> ծածկագրով գնանշման հարցման միջոցով Դիլիջանի հանգստյան գոտու կառուցման աշխատանքների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի պահանջել սույն որոշումը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում Դատարան ներկայացնել <<ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-23/1>> ծածկագրով գնման գործընթացի հետ կապված բոլոր ապացույցները, որոնք գտնվում են պատասխանողի տիրապետման տակ:

3. Սույն որոշումն անհապաղ ուղարկել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Վ. ԹՈՐՈՍՅԱՆ**